ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
ՄԵՔԵՆԱՅԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ
N ՀՀՌՑ-ՄԱԾՁԲ-21/21

ք. Երևան 13 դեկտեմբերի 2021 թ.

«Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց» ՓԲ ընկերությունն, ի դեմս գլխավոր տնօրեն Մ. Միլիտոնյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ «Պատվիրատու», մի կողմից, և «Բի Էս Թի» ՍՊ ընկերությունն, ի դեմս տնօրեն Կ. Եղիազարյանի, այսուհետ՝ «Կատարող», մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը, այսուհետ՝ «Պայմանագիր», հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը իրականացնում է ավտոտրանսպորտային միջոցի շուկայական արժեքի գնահատման պարտավորությունը, այսուհետ՝ «Ծառայություն»՝ համաձայն Պայմանագրի անբաժանելի մասը կազմող Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի (Հավելված 1) պահանջների:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող Ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է Պայմանագրի Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող Ծառայություն.

ա) Չընդունել Ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի Ծառայությունը Պայմանագրին համապատասխանող Ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու Պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել Պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել Պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է Պայմանագիրը: Կատարողի կողմից Պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված Ծառայությունը չի համապատասխանում Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է Ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված Ծառայության արդյունքը, իսկ Ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև Պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով սահմանված պայմաններով ապահովել Ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Ծառայության կատարման արդյունքներն ընդունվում են Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Կատարողը Պատվիրատուին է ներկայացնում մատուցված Ծառայության մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության (Հավելված N 3) երկու օրինակ:

3.2 Հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրվում է, եթե մատուցված Ծառայությունը համապատասխանում է Պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրություն չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար Պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է Պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից տասնօրյա ժամկետում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.4 Եթե Պատվիրատուն Պայմանագրի 3.3 կետով սահմանված ժամկետում չի ընդունում Պայմանագրի արդյունքը կամ չի մերժում, ապա այն համարվում է ընդունված և Պայմանագրի 3.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1 Պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա Ծառայության ընդհանուր գինը կազմում է 15 000 (տասնհինգ հազար) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն՝ 2500 (երկու հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ: Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած Ծառայության դիմաց վճարում է անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ 5 բանկային օրվա ընթացքում:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում Ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող Ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ ծառայության կատարման համար նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3 Պայմանագրով նախատեսված Ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված Ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են Ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.4 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

7.5 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.6 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով Ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով Ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.7 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.8 Սույն պայմանագիրը կազմված է 6 /վեց/ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, 2 3 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.9 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ, ք. Երևան, Նորք, Հովսեփյան 95	ՀՀ, ք. Երևան, Սայաթ-Նովա 40, 82/31
«Ամերիաբանկ» ՓԲԸ	«Արդշինբանկ» ՓԲԸ
h/h 1570027609970100	h/h 24701337415000
ՀՎՀՀ 01501898	ՀՎՀՀ 02639824
_____	_____
(ստորագրությունը)	(ստորագրությունը)
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 1
13 դեկտեմբերի 2021 թ. կնքված
ՀՀՌՑ-ՄԱԾՁԲ-21/21 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության							
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը*	Ավտոմեքենայի			մատուցման	
			քանակը	միավորի գինը	ընդհանուր գումարը	հասցեն	ժամկետը
1	79411220	ավտոմեքենայի գնահատում	1	15000	15000	ՀՀ, ք. Երևան, Նորք, Հովսեփյան 95	պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից 5 /հինգ/ օրացուցային օրվա ընթացքում

Հ/հ	ավտոմեքենայի մակնիշը, պետհամարանիշը	արտ.տարեթիվը	տեխնիկական վիճակը
1	UAZ 31514, թեթև մարդատար, ունիվերսալ Պետահամարանիշ՝ 326 LS 64	2000	ֆիզիկապես և բարոյապես մաշված է, շահագործման ենթակա չէ

1.Գնահատման օբյեկտ Գնահատման օբյեկտ են հանդիսանում <<Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց>> ՓԲԸ-ի հիմնական միջոցը:

2. Գնահատվող օբյեկտների գույքային իրավունքները

Գնահատվող օբյեկտների գույքային իրավունքները. Սեփականության իրավունք.

3. Գնահատման նպատակը

Գնահատման նպատակն է հանդիսանում օբյեկտների միջինացված շուկայական արժեքի որոշումը

4. Արժեքի տեսակ

5. Միջինացված շուկայական արժեքի որոշումը՝ արժեք

Գնահատման իրականացման ժամկետը ներառյալ հաշվետվությունների կազմումը և ներկայացումը Պատվիրատուին՝ սույն պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված **5 օրացույցային օր:**

6. Գնահատման հաշվետվության նկատմամբ պահանջներ

Օբյեկտի գնահատման արդյունքները պետք է ներկայացվեն Պատվիրատուին գնահատման գրավոր հաշվետվության /այսուհետ Հաշվետվություն/ տեսքով և էլեկտրոնային տարբերակով, ինչպես նաև հաշվարկային տվյալները՝ Excel ֆորմատով: Հաշվետվությունը չպետք է պարունակի ոչ միանշանակ մեկնաբանություններ: Տեղեկությունները, որոնք օգտագործվում են հաշվետվությունում պետք է պարունակեն դրանց ստացման աղբյուրների հղումներ, հետևությունները և եզրակացությունները պետք է համապատասխանեն Հաշվետվության բովանդակությանը և հաշվարկների արդյունքներին:

Հաշվետվությունում պարտադիր նշվում են.

Գնահատման դրությունը, տեղազննման և հաշվետվության կազմման դրությունը, օգտագործված գնահատման ստանդարտները, գնահատման նպատակը, որոշվող արժեքների տեսակը, դրանց սահմանման չափորոշիչները, գնահատման իրականացման հիմքերը, գնահատողի գտնվելու վայրը և փոստային ինդեքսը, գնահատողի որակավորման վկայականը, օբյեկտի հաշվեկշռային արժեքը, մնացորդային արժեքը, մաշվածությունը՝ համաձայն հաշվապահական հաշվառման տվյալների, օբյեկտի թողարկման /շահագործման/ դրությունը, դրաֆիզիկական /տեխնիկական/ վիճակը, ֆիզիկական, ֆունկցիոնալ և արտաքին մաշվածությունը՝ նշելով ընդհանուր կուտակված մաշվածությունը, գնահատման օբյեկտի համառոտ նկարագիր, շուկայի /շուկաների/ վերլուծություն, որին /որոնց/ առընչվում է և որոնցում գործում է օբյեկտը, ինչպես նաև այլարտաքին գործոնների վերլուծություն, որոնք անմիջականորեն չեն առնչվում օբյեկտին, սակայն ազդում են նրա արժեքի վրա /ՀՀ և տարածաշրջանի, որում գտնվում է օբյեկտը, սոցիալտնտեսական վիճակի վերլուծություն/, արժեքի որոշման մեթոդիկան՝ հիմնավորելով օգտագործված մոտեցումները, հաշվարկման մեթոդները և ենթադրությունները, բոլոր միջանկյալ հաշվարկները, որոնց հիման վրա որոշվել է արժեքը, արժեքի ընդհանուր մեծության հիմնավոր եզրակացություն:

Հաշվետվությանը կցվում են հավելվածներ, որոնցում բերվում են աշխատանքի ընթացքում օգտագործվող փաստաթղթերի պատճեները, իրավունքները հաստատող փաստաթղթերի պատճեները, գնահատման օբյեկտի լուսանկարներ, վերլուծական և այլնյութեր, որոնք գնահատողի կարծիքով անհրաժեշտ են գնահատման իրականացման հավաստիությունը հաստատելու համար:

Ծառայությունների մատուցման համար պահանջվող լիցենզիան՝ Պետական գույքի գնահատման համար անհրաժեշտ լիցենզիաներ, հավաստագրեր

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ, ք. Երևան, Նորք, Հովսեփյան 95 «Ամերիաբանկ» ՓԲԸ h/h 1570027609970100 ՀՎՀՀ 01501898	ՀՀ, ք. Երևան, Սայաթ-Նովա 40, 82/31 «Արդշինբանկ» ՓԲԸ h/h 247013374150000 ՀՎՀՀ՝ 02639824
(ստորագրությունը)	(ստորագրությունը)
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 2

13 դեկտեմբերի 2021 թ. կնքված
ՀՀՌՑ-ՄԱԾՁԲ-21/21 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

Ծառայության														
Հ/Հ	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանում	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2021թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում, ՀՀ դրամ												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	734321000	Ավտոմեքենայի գնահատում	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	15 000	15 000

**Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ, ք. Երևան, Նորք, Հովսեփյան 95
«Ամերիաբանկ» ՓԲԸ
h/h 1570027609970100
ՀՎՀՀ 01501898

(ստորագրությունը)
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ

ՀՀ, ք. Երևան, Սայաթ-Նովա 40, 82/31
«Արդշինբանկ» ՓԲԸ
h/h 247013374150000
ՀՎՀՀ՝ 02639824

(ստորագրությունը)
Կ.Տ.

BEST SOLUTIONS TEAM

Գնահատող՝ «ԲԻ ԷՍ ԹԻ» ՍՊԸ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

շուկայական արժեքի գնահատման

2021

«ՎԱՎԵՐԱՑՎՈՒՄ Է»

«ԲԻ ԷՍ ԹԻ» ՍՊԸ ՏՆՕՐԵՆ

Կ. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

«17» դեկտեմբեր 2021թ.

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ №ՇԳ-21/50

1. ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՌԱՐԿԱՆ

Սույն եզրակացությամբ գնահատվում է պատվիրատու՝ «Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց» ՓԲ ընկերության կողմից ներկայացված ավտոտրանսպորտային միջոցը (հետագայում՝ գույք):

№	*Անվանում, մակնիշ, պետ. համարանիշ*	*Արտադրության տարեթիվ*
1.	UAZ 31514, թեթև մարդատար, ունիվերսալ , պետհամարանիշ՝ 326 LS 64	2000

2. ԱՐԺԵՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԸ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ

Արժեքի հիմնական տեսակներ, որոնք օգտագործվում են ավտոտրանսպորտային միջոցները գնահատելու համար.

№	*Արժեքի անվանումը*	*Սահմանումը*
1	Ավտոտրանսպորտային միջոցի շուկայական արժեք	Շուկայական արժեք՝ առավել հավանական գին, որի դեպքում մեքենան կարող է իրացվել բաց շուկայում՝ մրցակցային պայմաններում, երբ գործարքի կողմերը գործում են ողջամիտ, տիրապետելով ողջ անհրաժեշտ տեղեկատվությանը, իսկ գործարքի գնի արժեքի մեծության մեջ չի արտացոլվում որևէ արտառոց հանգամանք:
2	Ավտոտրանսպորտային միջոցի արժեքը սահմանափակ շուկայում	Ավտոտրանսպորտային միջոցի արժեքը, որի վաճառքը բաց շուկայում հնարավոր չէ կամ պահանջում է լրացուցիչ ծախսեր՝ համեմատած ազատ շրջանառվող ավտոտրանսպորտային միջոցի ծախսերի հետ: Օգտագործվում է այն ավտոտրանսպորտային միջոցների գնահատման համար, որոնց շրջանառությունը սահմանափակված է կամ արգելված գործող օրենսդրության կառուցվածքային կամ էկոլոգիական ապահովության հոդվածներին համապատասխան:
3	Ներկայում օգտագործվող ավտոտրանսպորտային միջոցի արժեք	Այն ավտոտրանսպորտային միջոցի արժեքն է, որը սահմանվում է ելնելով գոյություն ունեցող պայմաններից և դրա օգտագործման նպատակից: Նախատեսված է այն ավտոտրանսպորտային միջոցների գնահատման համար,

		որոնց օգտագործման նպատակն ու պայմանները էապես տարբերվում են զանգվածային շրջանառության ավտոտրանսպորտային միջոցների օգտագործման նպատակից և պայմաններից: Օգտագործվում է հիմնականում հազվագյուտ ավտոտրանսպորտային միջոցների գնահատման համար:
4	Ավտոտրանսպորտային միջոցի լիկվիդացիոն արժեքը	Ավտոտրանսպորտային միջոցի արժեքն է, երբ այն պետք է օտարվի սովորականից ավելի կարճ ժամանակահատվածում: Հիմնականում գնահատվում է կազմակերպության լիկվիդացման ընթացքում, որի բալանսում այն գտնվել է: Լիկվիդացիոն արժեքի վերին սահմանը ավտոտրանսպորտային միջոցի շուկայական արժեքն է, իսկ ստորին սահմանը՝ ավտոտրանսպորտային միջոցի ուտիլիզացման արժեքը:
5	Ավտոտրանսպորտային միջոցի ուտիլիզացիոն արժեքը	Ավտոտրանսպորտային միջոցի արժեք, որը հավասար է իր բոլոր ագրեգատների, հանգույցների, համակարգերի ու բաղկացուցիչ մասերի շուկայական արժեքին, ինչպես նաև դրա կազմի մեջ մտնող բոլոր շրջանառու նյութերի՝ ներառյալ դրանց ուտիլիզացման ծախսերը:
6	*Արժեքի հատուկ տեսակները*	
6.1	Ավտոտրանսպորտային միջոցի մաքսային արժեքը	Ավտոտրանսպորտային միջոցների շուկայական արժեք, արտահանող երկրում՝ հաշվի առնելով ավտոտրանսպորտային միջոցի առաքման ծախսերը մինչև ՀՀ մաքսային տարածք, (փոխադրման, ներմուծման և արտահանման, ապահովագրական ծախսեր), ինչպես նաև գնորդների կոմիսիոն և միջնորդական վճարները, բացառությամբ ավտոտրանսպորտային միջոցի ձեռքբերման միջնորդավճարից: Ավտոտրանսպորտային միջոցների մաքսային արժեքը, հաշվարկվում է մաքսային վճարների և տուգանքների, ինչպես նաև այլ տեսակի վճարների այն արժեքից, որը կախված է ավտոտրանսպորտային միջոցների մաքսային արժեքից՝ գործող օրենսդրության համաձայն:
6.2	Ավտոտրանսպորտային միջոցի ապահովագրական արժեքը	Ավտոտրանսպորտային միջոցների շուկայական արժեք, սահմանվում է ապահովագրության պահին կնքած ապահովագրական պայմանագրով: Համարվում է ապահովագրական պայմանագրի նշանակալի պայմաններից մեկը:
6.3	Ավտոտրանսպորտային միջոցի վերանորոգման (վերականգնողական) արժեքը	Ավտոտրանսպորտային միջոցի վնասների վերացման արժեքն է, իր մեջ պարունակող աշխատանքային և նյութական ծախսեր, վերադիր ծախսեր, հարկեր և այլ պարտադիր վճարներ, ինչպես նաև շահույթ:
6.4	Վնասի դեպքում	Ավտոտրանսպորտային միջոցների ստացված վնասի վիճակի

	ավտոտրանսպորտային միջոցի փոխհատուցվող արժեքը	հասցնելու վերականգնման և վերանորոգման ծախսի արժեքն է, մինչև այն տեխնիկական վիճակը, որում այն գտնվել է մինչև վնասվելը, ներառելով դրա ապրանքային արժեքի նվազումը առանձին տեսակների վերանորոգման աշխատանքների արդյունքում:

Ավտոտրանսպորտային միջոցների գնահատման դեպքում կարող են սահմանվել նաև արժեքի հետևյալ տեսակները:

Կախված այն բանից, թե գնահատվում է նոր կամ օգտագործված ավտոտրանսպորտային միջոց, շուկայական արժեքը կարող է պայմանավորված լինել ավտոտրանսպորտային միջոցի առաջնային կամ երկրորդային շուկայով: Առաջնային շուկայի շուկայական արժեք՝ սա ավտոտրանսպորտային միջոցի շուկայական արժեքն է, որով առաջին անգամ այն առաջարկվել է վաճառքի: Երկրորդական շուկայի արժեք՝ օգտագործված ավտոտրանսպորտային միջոցի արժեքն է՝ պետական գրանցումն անցած և վաճառքի առաջարկված:

Հիմնական միջոցների վերագնահատման համար օգտագործվում է ավտոտրանսպորտային միջոցների արժեքների հետևյալ տեսակները:

Վերականգնողական արժեք՝ գնահատման վայրում գնահատման ամսաթվի դրությամբ արժեքն է՝ նույնական կամ նմանատիպ վիճակում գտնվող, շրջանառության սկզբից նույն վազքով և նույն տարեթվով ավտոտրանսպորտային միջոցի համեմատությամբ:

Լրիվ վերականգնողական արժեք՝ գնահատվողին համապատասխան նոր ավտոտրանսպորտային միջոցի նույնական կամ նմանատիպ գնահատված արժեքն է գնահատման վայրում գնահատման ամսաթվի դրությամբ:

Մնացորդային վերականգնողական արժեք՝ ավտոտրանսպորտային միջոցի վերագնահատումից հետո հաշվարկված արժեքն է, ներառյալ մաշվածությունը:

Օգտահանման արժեք՝ դուրս գրված, և/կամ իր ռեսուրսը վերարտադրած ավտոտրանսպորտային միջոցի արժեքն է, ինչպես նաև այն ավտոտրանսպորտային միջոցի, որի վերականգնումը վնասից հետո հնարավոր չէ, այն պայմանով, որ բոլոր սարքավորումները, հանգույցները և դետալները ենթակա են վերամշակման:

Եթե գնահատումը կատարվում է, կապված ավտոտրանսպորտային միջոցի առաքման պայմանների հետ, ապա արժեքի ստացման համար անհրաժեշտ է նախապես նշել առաքման պայմանները: Առաջին հերթին սա վերաբերվում է ավտոտրանսպորտային միջոցների արտահանմանն ու ներմուծմանը:

Գնահատման նպատակը դիտարկվող գույքի շուկայական արժեքի որոշումն է՝ գնահատման օրվա դրությամբ: Սույն եզրակացության մեջ շուկայական արժեքը մեկնաբանվում է նաև որպես հաշվարկային մեծություն, որը իրենից ներկայացնում է գույքի օտարման մեկնարկային գինն աճուրդում՝ ազատ մրցակցային շուկայում, գնահատման օրվա դրությամբ, երբ գործարքի կողմերն իրազեկ են, հաշվենկատ և գործում են խելամիտ, խոհեմաբար, առանց հարկադրանքի, այսինքն.

- գործարքի կողմերից մեկը պարտավորված չէ օտարելու գնահատվող գույքը, իսկ մյուսը գնելու
- կողմերը լավ տեղեկացված են գործարքի առարկայից և գործում են սեփական շահերից ելնելով

- գույքն օտարվում է խելամիտ ժամանակահատվածում, որն ապահովում է վերջինիս հասանելիությունը պոտենցիալ գնորդների մեծամասնությանը
- շուկան մրցակցային է, որտեղ առկա է գույքի բավարար ընտրություն՝ մեծաքանակ գնորդների և վաճառողների միջև գործարքների իրականացման համար
- գործարքի գինն իրենից ներկայացնում է դրամով արտահայտված գնահատվող առարկայի փոխհատուցման չափը, երբ փոխադարձ զիջումներ և զեղչեր կողմերը չեն իրականացրել:

3.ԳՆԱՀԱՏՎՈՂ ԳՈՒՅՔԻ ԻՐԱՎԱԿԱՆ ՓԱԹԵԹԸ

Գնահատման ծառայությունների մատուցման համար հիմք է հանդիսանում «Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց» ՓԲ ընկերության (իրավաբանական հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Նորք, Հովսեփյան 95) և «ԲԻԷսԹի» ՍՊԸ-ի (գործունեության հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Սայաթ-Նովա 40, 82/31) միջև 13.12.2021թ. կնքված գույքի գնահատման Պայմանագիրը և պայմանագրին կից N1 և N2 Հավելվածները:

4.ԳՆԱՀԱՏՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾԸ

Գնահատման աշխատանքները կատարվել են 13.12.2021թ. մինչև 17.12.2021թ.:

5.ԳՆԱՀԱՏՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ

Գնահատման գործընթացը բաղկացած է հետևյալ փուլերից՝

Գնահատման առարկայի տեղազննում

Տեղազննումը կատարվել է գնահատման ընթացքում: Տեղազննմամբ գնահատողը պարզում է գույքի ֆիզիկական վիճակը, պահպանման-պահեստավորման պայմանները, կարող է ծանոթանալ տեխնիկական սպասարկման մեթոդներին, տեխնոլոգիային, վերանորոգման պարբերությանը և դրա պահպանմանը:

Անհրաժեշտ փաստաթղթերի և տեղեկատվության ուսումնասիրում

- մասնագետների հետ հարցազրույցների միջոցով անհրաժեշտ տեղեկատվության հավաքագրում,
- համապատասխան տեղեկատվության հավաքագրում, մշակում և վերլուծություն,
- գնահատման մեթոդների կիրառում և եզրակացության կազմում:

6.ԳՆԱՀԱՏՎՈՂ ԳՈՒՅՔԻ ՀԱՄԱՌՈՏ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Ինչպես վերը նշվեց, գնահատվում է պատվիրատու՝ «Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց» ՓԲ ընկերության կողմից ներկայացված ավտոտրանսպորտային միջոցը:

Գույքն իրենից ներկայացնում է ինտենսիվ շահագործված ավտոմեքենա, որի վիճակի վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացված է ստորև:

Մակնիշ, պետ.համարանիշ	*Նկարագրություն*
UAZ 31514, թեթև մարդատար, ունիվերսալ , պետհամարանիշ՝ 326 LS 64	Հաշվառումից ժամ հանված լինելու տեղեկանք- N8647601 Հաշվառման վկայագիր - SC001153 Նույնականացման համար - XTT315150Y0019570 Արտ. տարեթիվը - 2000թ. Հենասարքի համարը - Y0019724 Շարժիչի համարը - Y0608881 Շարժիչի հզորությունը - --- Վազքը - 73000կմ(պայմանական) Թափքի տեսակը - Ունիվերսալ, համարը՝ Y0019570

Գնահատող՝ *Կարեն Եղիազարյան*

	Գույնը - Մոխրագույն գորշ երկնագույն Գնահատման պահին ավտոտրանսպորտային միջոցը չի շահագործվում: Այն հաշվառումից ժամանակավորապես հանված է: Ավտոտրանսպորտային միջոցը ինտենսիվ շահագործված է և ֆիզիկապես մաշված: Մարտկոցը և հիմնական հանգույցների որոշ մասեր բացակայում են: Անվադողերը հին են: Մեքենայի թափքի վրա առկա են կոռոզիայի և մեխանիկական վնասվածքների ենթարկված մասեր: Մեքենայի սրահը վատ վիճակում է: Ընդհանուր առմամբ մեքենան գտնվում է վատ վիճակում:

Գույքն առավել մանրամասն արտացոլված է ստորև ներկայացվող լուսանկարներում և այն տվյալները, որոնք չեն ընդգրկվել սույն նկարագրության մեջ, կարող են լինել պատկերված լուսանկարներում:

7. ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Գույքի գնահատման համար ընդունված են և կիրառվում են ծախսային, եկամտաբերության և համեմատական (շուկայական) մեթոդները:

Այս բոլոր մեթոդները հիմնված են շուկայական տվյալների վերլուծության վրա:

7.1 Եկամտաբերության մեթոդ

Այս մեթոդը հիմնված է գնահատվող գույքի շահագործումից կամ վարձակալումից սպասվող եկամտի որոշման և դրա հետագա կապիտալիզացիայի վրա: Ընդհանուր առմամբ գույքի գնահատման եկամտային մեթոդի հաշվարկը իրականացվում է հետևյալ փուլերով.

1.Գույքի տարեկան համալիր գործառնական եկամտի որոշում

2.Գույքի իրական գործառնական եկամտի որոշում

3.Գույքի մաքուր գործառնական եկամտի որոշում

4.Կապիտալիզացիայի գործակցի հաշվարկ

5.Գույքի շուկայական արժեքի որոշում

Համալիր գործառնական եկամուտների հաշվարկման համար, որպես ելակետային տվյալ կարելի է վերցնել հետևյալ շրջանում գործող ամսական վարձավճարների չափը: Այնուհետև՝ հաշվարկվում է գնահատվող գույքի տարեկան գործառնական եկամուտը, որը որոշվում է հետևյալ բանաձևով. ԳԵ=ԴՎx12, որտեղ

ԳԵ - վարձակալումից ստացվող տարեկան եկամուտն է,

ԴՎ - ամսական վարձակալման դրույքաչափն է,

Համապատասխանաբար իրական գործառնական եկամուտը՝ ԻԳԵ-ն կհաշվարկվի հետևյալ բանաձևով. ԻԳԵ=ԳԵxԴ, որտեղ

ԻԳԵ - տարեկան իրական գործառնական եկամուտն է,

ԳԵ - վարձակալումից ստացվող տարեկան եկամուտն է,

Դ - եկամուտի դիսկոնտավորման գործակիցն է:

Եկամտային մեթոդի կիրառման հաջորդ փուլը մաքուր գործառնական եկամտի՝ ՄԳԵ-ի որոշումն է: ՄԳԵ-ն հաշվարկվում է հետևյալ բանաձևով. ՄԳԵ= ԻԳԵx(1-ԳԾ), որտեղ

ՄԳԵ-ն տարեկան մաքուր գործառնական եկամուտն է,

ԻԳԵ-ն տարեկան իրական գործառնական եկամուտն է,

ԳԾ-ն սպասարկման և շահագործման (գործառնական) տարեկան ծախսերն են, որոնք կարող են կազմել 1-3%:

Կապիտալիզացիայի գործակցի հաշվարկ

Կապիտալիզացիայի գործակցի մեծությունը հաշվարկված է կոմուլյատիվ կառուցման եղանակով: Կապիտալիզացիայի գործակիցը բաղկացած է հետևյալ բաղադրիչներից.

1. Ցածր ռիսկայնություն ունեցող ակտիվների տոկոսադրույք,
2. Լրացուցիչ ռիսկի համար վճարի տոկոսադրույք,
3. Ցածր իրացվելության համար փոխհատուցման տոկոսադրույք,
4. Կապիտալ փոխհատուցման դրույքաչափ:

Ցածր ռիսկայնություն ունեցող ակտիվների տոկոսադրույք ($ԿԳ_1$)

Ցածր ռիսկայնություն ունեցող ներդրումների դրույքաչափը ցույց է տալիս ներդրումային կապիտալի նվազագույն փոխհատուցման չափը և հանդիսանում է կապիտալիզացիայի գործակցի կառուցման հիմքը, որին ավելացվում են մնացած բաղադրիչները: Այս գործակիցը որոշելու համար հիմք է հանդիսանում արժեթղթերի շուկայում ձևավորված տոկոսադրույքների միջին մեծությունը:

Լրացուցիչ ռիսկի համար վճարի տոկոսադրույքը ($ԿԳ_2$)

Բոլոր ներդրումները, բացառությամբ պետական կարճաժամկետ և միջին ժամկետ պարտատոմսերում ներդրումների, ունեն բարձր ռիսկայնություն: Որքան մեծ է ռիսկը, այնքան մեծ պետք լինի տոկոսադրույքի չափը (եկամտի չափը), որպեսզի ներդրողը իր վրա վերցնի ներդրումային որևէ նախագծի իրացման ռիսկը:

Ցածր իրացվելիության համար փոխհատուցման տոկոսադրույք ($ԿԳ_3$)

Իրացվելիությունը ցույց է տալիս, թե որքան արագ գույքը կփոխարինվի կանխիկ դրամի: Գույքը, համեմատած մյուս ակտիվների (բաժնետոմսերի և այլ արժեթղթերի) հետ, ունի ցածր իրացվելիություն: Այս բաղադրիչի որոշման համար կկիրառենք իրացվելիության համար փոխհատուցման բանաձևը՝ $ԿԳ_3=(1-1/(1+ԿԳ_1)տ)/ԻՀ$, որտեղ

$ԿԳ_1$՝ ՊԿՊ-ի տարեկան միջինացված տոկոսադրույքն է,

ԻՀ՝ գույքի իրացման հնարավոր հաճախականությունն է տարվա ընթացքում,

տ՝ հաշվարկման տարիները:

Կապիտալի փոխհատուցման դրույքաչափ ($ԿԳ_4$)

Այս ցուցանիշի մեծությունը կախված է նրանից, թե քանի տարի է պահանջվում ներդրված կապիտալի վերադարձման համար և որոշվում է հետևյալ բանաձևով. $ԿԳ_4=1/ԺԿՎ$, որտեղ ԺԿՎ-ն կապիտալի վերադարձման նախատեսված ժամկետն է

Այսպիսով կապիտալիզացիայի գործակցի մեծությունը կլինի $ԿԳ=ԿԳ_1+ ԿԳ_2+ ԿԳ_3+ ԿԳ_4$

Եկամտային մեթոդի կիրառման վերջին փուլը գնահատվող գույքի շուկայական արժեքի որոշումն է՝ հետևյալ բանաձևով. ԱՇ=ՄԳԵ/ԿԳ

7.2 Համեմատական (շուկայական) մեթոդ

Այս մեթոդը սովորաբար օգտագործվում է երկրորդային շուկա ունեցող գույքի գնահատման համար: Նրա հիմնական սկզբունքը գնահատման առարկայի համեմատությունն է.

ա/ երկրորդային շուկայում վաճառված կամ վաճառվող ճշգրիտ նմանատիպի հետ,

բ/ երկրորդային շուկայում վաճառված կամ վաճառվող մոտավոր նմանատիպի հետ՝ տարբերության շտկումներ ներառելով,

գ/ միանգամյա նոր գույքի արժեքի հետ՝ ներառելով մաշվածության շտկումը (երկրորդային շուկայում նմանատիպի բացակայության դեպքում):

7.3 Ծախսային մեթոդ

Գնահատման ծախսային մեթոդը կիրառելիս օգտագործվում է սկզբունքային այն մոտեցումը, երբ շուկայական արժեքը որոշվում է գույքի վերականգնողական արժեքի հիման վրա, հաշվի առնելով գույքի մաշվածությունը:

Գնահատման ժամանակ հաշվի են առնվում մաշվածության երեք տեսակներ.

ա/ ֆիզիկական մաշվածություն (վերականգնվող և չվերականգնվող), որը կապված է գույքի ծառայության ժամկետների հետ,

բ/ գործառույթային մաշվածություն (վերականգնվող և չվերականգնվող), որը կապված է գույքի՝ գործառույթային առումով, ժամանակակից պահանջներին անհամապատասխանության հետ,

գ/ արտաքին (տնտեսական), ազդեցության մաշվածություն (չվերականգնվող), որը կապված է արտաքին գործոնների հետ:

Գույքի վերականգնողական արժեքը հաշվարկվում է համեմատական միավորի մեթոդով: Այս մեթոդը հիմնված է նմանօրինակ գույքի համեմատական մեկ միավորի շինարարության արժեքի հաշվարկման վրա: Համեմատական միավորի արժեքը հաշվարկելիս ներառվում են շտկումներ՝ կախված համեմատվող օբյեկտների տարբերություններից: Ծախսային մեթոդով գնահատման ժամանակ գույքի արժեքը որոշվում է հետևյալ բանաձևով. ԱՇ=ՎԱ-Մ, որտեղ

ՎԱ - ն գնահատվող գույքի վերականգնողական արժեքն է,

Մ-ն գույքի ընդհանուր մաշվածությունն է,

Ընդհանուր մաշվածությունը որոշվում է հետևյալ բանաձևով. $Մ=Մ_1+Մ_2+Մ_3$, որտեղ

$Մ_1$- ֆիզիկական մաշվածությունն է

$Մ_2$- գործառույթային մաշվածությունն է

$Մ_3$- արտաքին (տնտեսական) ազդեցության մաշվածությունն է:

9. ՆՈՐՄԱՏԻՎԱՅԻՆ ՕԳՏԱԿԱՐ ՊԻՏԱՆԵԼԻՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ ԵՎ ՄԱՇՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետությունում կիրառվող՝ ՀՀ ֆինանսների նախարարի 2016թ. հունվարի 8-ի թիվ 3-Ն հրամանով սահմանված նորմատիվային օգտակար ծառայության ժամկետները և համադրելով դրանք գնահատվող գույքի արտադրման տարեթվի հետ, միևնույն ժամանակ արձանագրելով, որ այդ ժամկետները նախատեսված են հանրային հատվածի կազմակերպություններում հիմնական միջոցների մաշվածությունների հաշվարկման համար, նաև ընդունելով, որ այդ ժամկետները արժանահավատ բնույթ են կրում, կարելի է եզրակացնել, որ գնահատվող գույքը չի գտնվում նորմատիվային օգտակար ծառայության ժամկետում, ինչը իր հերթին համապատասխանաբար կարող է ազդել շուկայական արժեքի որոշման գործընթացի վրա:

Բնականաբար, կիրառման /օգտագործման/, ինչպես նաև պահեստավորման ընթացքում գույքը ֆիզիկապես մաշվում է, իսկ ժամանակի հետ ձեռք է բերում նաև գործառնական /ֆունկցիոնալ/ մաշվածություն, կապված նոր սերնդի արտադրանքի ներդրման, կիրառման և այլ գործընթացների հետ: Այս իրողությունը ևս կարող է ազդել շուկայական արժեքի որոշման վրա:

Միաժամանակ գնահատողը կարող է անտեսել այդ գործոնները, ելնելով գնահատվող գույքի շուկայի առանձնահատկություններից և յուրահատկությունից, ինչպես նաև գնահատվող գույքի վերաբերյալ առկա տեղեկատվության ծավալից:

Գնահատող՝ *Կարեն Եղիազարյան*

9.ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԵԹՈԴԻ (ՄԵԹՈԴՆԵՐԻ) ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ

Եկամուտների կապիտալիզացիայի մեթոդ

Եկամտաբերության մեթոդը հիմնվում է գնահատվող օբյեկտի ընթացիկ արժեքի և վերջինիս օգտագործումից սպասվող ապագա եկամուտների վրա: Քանի որ եկամուտ է ապահովում միայն կոնկրետ արտադրությունը, ուստի եկամտաբերության մեթոդը չի կիրառվում արտադրության տարրերի հետ կապված աշխատանքային միջոցների առանձին տեսակների գնահատման համար, այլ հիմնականում կիրառվում է միայն ձեռնարկությունների, արտադրական միավորումների և այլ բիզնես օբյեկտների գնահատման համար: Այս պատճառով էլ ավտոտրանսպորտային միջոցների գնահատման ժամանակ եկամտաբերության մեթոդը պրակտիկորեն չի կիրառվում: Եկամտաբերության մեթոդի կիրառումը, ծախսային և համեմատական մեթոդների հետ մեկտեղ իրականացվում է միայն հնաոճ ավտոմեքենաների գնահատման ժամանակ այն դեպքում, երբ գնահատվող ավտոմեքենան սեփականատիրոջը եկամուտ է բերում ֆիլմերում նկարահանումներից, հնաոճ ավտոմեքենաների՝ մրցանակային ֆոնդով հանրային մրցարշավերին մասնակցությունից և հնաոճ ավտոմեքենաների ցուցահանդեսներից:

Համեմատական (շուկայական) մեթոդ

Քանի որ ավտոտրանսպորտային միջոցները հանդիսանում են զանգվածային արտադրության և սպառման արտադրանք, ուստի ավտոտրանսպորտային միջոցների գնահատման հիմնական մեթոդ է հանդիսանում համեմատական մեթոդը: Տվյալ մեթոդը հիմնվում է առքի և վաճառքի գների համեմատության վրա, որոնք ձևավորվել են տվյալ պահին ավտոտրանսպորտային միջոցների ապրանքային շուկաներում: Համեմատական մեթոդի կիրառման համար տեղեկատվական աղբյուր են հանդիսանում տեղական և արտասահմանյան՝ նոր և օգտագործված ավտոտրանսպորտային միջոցների գներով բազմաթիվ տեղեկագրերը, կայքերը, մասնագիտացված տպագիր հրատարակությունները, արտադրող գործարանների գնացուցակները, առևտրային կազմակերպությունները և դիլերները: Քանի որ վաճառքի առաջարկներն ու առուվաճառքի գործարքների քանակը բավականին շատ են, ուստի գնային տեղեկատվությունը կայուն է, հասանելի և արժանահավատ:

Ծախսային մեթոդ

Ավտոտրանսպորտային միջոցի արժեքի գնահատման ժամանակ ծախսային մեթոդի կիրառումը հիմնվում է այն բանի վրա, որ գնահատվող ավտոտրանսպորտային միջոցի արժեքը հանդիսանում է վերջինիս պատրաստման ծախսերը: Քանի որ ավտոտրանսպորտային միջոցը հանդիսանում է մասսայական և խոշոր մասսայական արտադրության արտադրանք, ուստի ծախսային մեթոդը մեծամասամբ համարվում է անընդունելի: Դա կապված է այն բանի հետ, որ մեկ ավտոտրանսպորտային միջոցի պատրաստումը հանդիսանում է մեկանգամյա արտադրություն, որի տեսակարար ծախսերը մի քանի անգամ մեծ են, քան մասսայական արտադրության դեպքում: Ծախսային մեթոդը օգտագործվում է հիմնականում ավտոտրանսպորտային միջոցների արժեքի գնահատման տեսակների համար՝ կապված ավտոտրանսպորտային միջոցի վերանորոգման, վնասվածքից առաջացած նյութական վնասի չափի որոշման կամ շահագործման ընթացքում կառուցվածքում փոփոխություն կատարելու աշխատանքների հետ և իրագործվում է համապատասխան գնահաշվարկ կազմելու հիման վրա: Բացի այդ ծախսային մեթոդը կարող է կիրառվել անհատական ստեղծագործ կարգով արված

ավտոտրանսպորտային միջոցների գնահատման, ինչպես նաև հնառճ ավտոմեքենաների վերականգնման համար:

10.ԱՄՓՈՓՈՒՄԸ

Այսպիսով, «Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց» ՓԲ ընկերության կողմից ներկայացված տրանսպորտային միջոցի շուկայական արժեքի գնահատման աշխատանքները կատարելու համար մեր կողմից իրականացվել է գնահատվող գույքի մակնիշի, տարեթվի և տեխնիկական վիճակին համապատասխան գույքի առաջարկի ու պահանջարկի գների ուսումնասիրություն: Կատարված ուսումնասիրությունների, վերլուծությունների և դատողությունների հիման վրա, կիրառելով գնահատման չափանիշներին համապատասխան համեմատական մեթոդը, ստացել ենք հետևյալ շուկայական արժեքն առ 17.12.2021թ.

№	Անվանում, մակնիշ, հ/հ	Արտ. տարեթիվ	Շուկայական արժեք, ՀՀ դրամ, ներառյալ հարկերը
1	UAZ 31514, թեթև մարդատար, ունիվերսալ, պետհամարանիշ՝ 326 LS 64	2000	980 000

11. ՀԱՏՈՒԿ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Հատուկ պայմանները հանդիսանում են սույն եզրակացության անքակտելի մասը:

11.1.Սույն եզրակացությունը վավեր է միայն ամբողջությամբ ներկայացված և միայն նշված նպատակի համաձայն:

11.2.Գնահատման համար տրամադրված և եզրակացության մեջ արտացոլված տեղեկությունները համարվում են հավաստի, սակայն գնահատողը չի կարող երաշխավորել վերոհիշյալ տվյալների բացարձակ ճշտությունը:

11.3.Գնահատողը գործել է որպես անկախ կատարող:

11.4.Գնահատվող առարկայի վերաբերյալ գնահատողի կարծիքը վավեր է միայն գնահատման օրվա դրությամբ:

11.5.Գնահատողի կողմից կատարված ուսումնասիրությունները և եզրակացությունները ամբողջությամբ անկանխակալ են:

11.6.Գնահատման արդյունքներն ունեն խորհրդատվական բնույթ:

11.7.Գնահատողի կողմից կատարված աշխատանքի արդյունքների իսկությունը հիմնված է նրա աշխատանքային փորձի և մատչելի տեղեկատվության վրա:

11.8.Սույն գնահատման եզրակացությունը պարունակում է գնահատողի մասնագիտական կարծիքը գնահատվող առարկայի վերաբերյալ: Պատվիրատուն կարող է չընդունել գնահատման արդյունքները և/կամ պահանջել գնահատողից լրացուցիչ պարզաբանումներ գույքի շուկայական արժեքի ձևավորման վերաբերյալ:

11.9.Գնահատողի կատարված աշխատանքի վարձատրությունը կապված չէ գնահատման արդյունքի և եզրակացության հետ:

11.10.Գնահատված արժեքն ենթադրում է արժեք, որը կարող է ձևավորվել գույքի սեփականատերերի անխափան վաճառքի համաձայնության պարագայում:

11.11.Սույն եզրակացությունը հանդիսանում է «ԲիԷսԹի» ՍՊԸ արտադրանքը և իր մեջ ներառում է առևտրային գաղտնիք, որը ենթակա չէ հրապարակման:

Գնահատող՝ *Կարեն Եղիազարյան*

12.ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԲԱԶԱՆ

12.1.Քննարկումներ մասնագետների հետ

12.2.Համացանց

12.3.Տվյալների սեփական բազա

Գնահատվող զույքերի նկարներ

UAZ 31514, թեթև մարդատար, ունիվերսալ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐ

ՊԵՏԱԿԱՆ ՄԻԱՄՆԱԿԱՆ ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆԻՑ ՔԱՂՎԱԾՔ առ 2021-08-09

«ԲԻ ԷՍ ԹԻ»
Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն (ՍՊԸ)

Գրանցման համար	286.110.864409
Հիմնադրման տարի	2015
Գրանցման ամսաթիվ	2015-07-07
Գործունեության ժամկետ	Անժամկետ
Կարգավիճակ	Իրավաբանական անձի լուծարման գործընթացում գտնվելու կամ գործունեության (գոյության) դադարման մասին պետական միասնական գրանցամատյանում տեղեկություններ գրառված չեն:
Իրավաբանական անձի ծածկագիր (ՁԿԴ)	49518312
Հարկ վճարողի հաշվառման համար (ՀՎՀՀ)	02639824
Սոցիալական վճարների պարտավորությունների անձնական հաշվի քարտի համար (Ապահովադրի ծածկագիր)	43114409
Էլ. փոստ	-
Կայք	-

Գտնվելու վայրը

Հասցե	ՄՈՍԿՈՎՅԱՆ Փ. / 28 / 13 ԿԵՆՏՐՈՆ 0002 ԵՐԵՎԱՆ ԵՐԵՎԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ
Հեռախոս	077355063

Գործադիր մարմնի ղեկավար

Պաշտոն	Տնօրեն
Անուն Ազգանուն	ԿԱՐԵՆ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ՀԱՄԼԵՏԻ
Անձնագրային տվյալներ	011203015 2021-07-12 011
Հասցե	ՄՈՍԿՈՎՅԱՆ Փ. / Շ / 28 / 13 ԿԵՆՏՐՈՆ 0002 ԵՐԵՎԱՆ ԵՐԵՎԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ

Հավելված N 3
13 դեկտեմբեր 2021 թ. կնքված
ՀՀՌՑ-ՄԱԾՁԲ-21/21 ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
ՀՀ, ք. Երևան, Սայաթ-Նովա 40, 82/31	ՀՀ, ք. Երևան, Նորք, Հովսեփյան 95
«Արդշինբանկ» ՓԲԸ	«Ամերիաբանկ» ՓԲԸ
h/h 2470103374150000	h/h 1570027609970100
ՀՎՀՀ՝ 02639824	ՀՎՀՀ 01501898

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

17 դեկտեմբեր 2021 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ ԱՎՏՈՏՐԱՆՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑԻ ՇՈՒԿԱՅԱԿԱՆ ԱՐԺԵՔԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ *13 դեկտեմբեր 2021թ.*
Պայմանագրի համարը՝ *ՀՀՌՑ-ՄԱԾՁԲ-21/21*
Պատվիրատուն՝ *«Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց» ՓԲ ընկերությունը, ի դեմս գլխավոր տնօրեն Մ. Միլիտոնյանի և պայմանագրի կողմը՝ «Բի Էս Թի» ՍՊ ընկերությունը, ի դեմս տնօրեն Կ. Եղիազարյանի կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.*
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /ՀՀ դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		
1.	Շարժական գույք	ավտոմեքենայի գնահատում	1	1	13.12.2021թ-17.12.2021թ.	17.12.2021թ.	15000	5 բանկային օր

Վերոհիշյալ ծառայությունների մատուցման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
ստորագրություն	ստորագրություն
Կ. Եղիազարյան	Մ. Միլիտոնյան
Կ.Տ.	Կ.Տ.

[1] Դուրս գրման ամսաթիվ			Հարկային հաշիվ (ծառայությունների մատուցման, աշխատանքների կատարման)	[2] Սերիա	[3] Համար
17	Դեկտեմբեր	2021 թ.		Ա	2493686707
[4] Մատակարարման ամսաթիվ					
17	Դեկտեմբեր	2021 թ.			

Ճշգրտվող հաշվի	
Սերիա	Համար

Ճշգրտվող հաշվի դուրս գրման ամսաթիվ		

Պայմանագիր	[5] Կնքման ամսաթիվ	[6] Համար
	13 Դեկտեմբեր, 2021 թ.	ՀՀՌՑ-ՄԱԾՁԲ-21/21

[7] Լրացուցիչ տվյալներ (պայմաններ)

[7.1] ՀԴՄ կտրոնի համար

Ծառայություններ մատուցող (աշխատանքներ կատարող) անձի

[8] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ)	0 2 6 3 9 8 2 4
[9] Անվանումը	«ԲԻ ԷՍ ԹԻ» Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն (ՍՊԸ)
[10] Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը	0 2 6 3 9 8 2 4 / 1
[11] Բանկային տվյալները	«Արդշինբանկ» ՓԲԸ N 2470103374150000
[12] Գտնվելու վայրը (հասցեն)	ԵՐԵՎԱՆ ԿԵՆՏՐՈՆ ԿԵՆՏՐՈՆ ԹԱՂԱՄԱՍ ՄՈՍԿՈՎՅԱՆ Փ. 28 13
[13] Լրացուցիչ տվյալներ	

Ծառայություններ (աշխատանքներ) ստացող անձի

[14] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) (ֆիզիկական անձի անձնագրի սերիան և համարը)	0 1 5 0 1 8 9 8
[15] Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը	0 1 5 0 1 8 9 8 / 1
[16] Անվանումը	«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍԱՅԻՆ ԵՎ ՌԱԴԻՈՀԱՂՈՐԴԻՉ ՑԱՆՑ» Փակ բաժնետիրական ընկերություն (ՓԲԸ)
[17] Բանկային տվյալները	N
[18] Գտնվելու վայրը (հասցեն)	ԵՐԵՎԱՆ ՆՈՐՔ-ՄԱՐԱՇ ՆՈՐՔ-ՄԱՐԱՇ ԹԱՂԱՄԱՍ ՀՈՎՍԵՓՅԱՆ 95
[19] Լրացուցիչ տվյալներ	
[20] Ում միջոցով	Անուն, ազգանուն
	Լիազորագիր — Համար
	Լիազորագիր — Ամսաթիվ

[21] Ծառայությունների մատուցման (աշխատանքների կատարման) ծավալի և վճարման ենթակա գումարի հաշվարկը

N	Ծառայությունների (աշխատանքների) անվանումը (բովանդակությունը)	Չափման միավորը	Ընդհանուր ծավալը (ծավալակշռը)	Միավորի գինը	Զեղչ(%)	Արժեքը	ԱԱՀ դրույքաչափը (%)	ԱԱՀ գումար	Ընդամենը
1	2	3	4	5	6	7	8	9	10
1	ավտոմեքենայի գնահատում	հատ	1	12500		12500	20	2500	15000
Ընդամենը						12500	X	2500	15000

Դուրս գրող՝ YEGHIAZARYAN KAREN 1114690287
անուն, ազգանուն

*Ստացող՝ PETROSYAN BELA 6405650081
անուն, ազգանուն

17/12/2021 15:42:33

17/12/2021 15:50:22